

«Ռազմավարական ինքնավարության»՝ որպես նոր աշխարհակարգի հաստատման գործընթացներում ԵՄ ազդեցության ընդլայնման հնարավորություններն ու մարտահրավերները

ՄԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Վ. Բոյոտովի անվան պետական համալսարան

Հոդվածում ուսումնասիրվում է ԵՄ պաշտոնական խոսույթում վերջին շրջանում կենտրոնական տեղ զբաղեցնող «ռազմավարական ինքնավարություն» հասկացությունն ու դրա նշանակությունը ԵՄ ազդեցության ընդլայնման վրա: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռազմավարական ինքնավարության աշխարհաքաղաքական չափմանը, քանզի նոր աշխարհակարգի հաստատման գործընթացներով պայմանավորված այն զգալիորեն ազդում է այդ գաղափարի գործնական իրացման հեռանկարների վրա: Ուկրաինայի դեպքի ուսումնասիրության ճանապարհով փորձ է արվում վերհանել ռազմավարական ինքնավարության հասնելու հնարավորություններն ու բարդությունները, ինչպես նաև ուրվագծել հենց ԵՄ-ի համար դրա հնարավոր փտանգների շրջանակը: Եզրակացվում է, որ ռազմավարական ինքնավարության ռազմական բաղադրիչի ընդլայնումը՝ կազմակերպության հիմքում ընկած նորմերից ու արժեքներից զգալի շեղման ճանապարհով, կարող է լուրջ խնդիրներ առաջացրել ինչպես ԵՄ-ի ներսում, այնպես էլ ԵՄ-ի՝ որպես «նորմատիվային ուժի» արտաքին իմիջի վրա:

Բանալի բառեր

Եվրոպական Միություն, «ռազմավարական ինքնավարություն», Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականություն, նոր աշխարհակարգ, «Ռազմավարական կողմնացույց»

Նախաբան

Մառը պատերազմի ավարտը, Եվրոպայում անվտանգության վակուումի գիտակցումը և դրա արդյունքում միջազգային ասպարեզում սեփական հեղինակությունն ամրապնդելու անհրաժեշտությունը պատճառ դարձան, որ Եվրամիությունը ձեռնամուխ լինի արտաքին և անվտանգային ընդհանուր քաղաքականության

ձևավորմանը: Վճռորոշ դերակատարություն ունեցան նաև հարևանների աճող ակնկալիքները Եվրամիությունից՝ հակամարտությունների կանխարգելման և վերակառուցման հարցերի առնչությամբ: Ինտեգրման գործընթացների ակտիվացումը ևս անհրաժեշտ էր դարձնում անմասն չմնալ անվտանգային և պաշտպանական խնդիրներից: Ակնհայտ էր, որ միջազգային քաղաքականության վրա ազդեցություն ունենալու տեսանկյունից միայն տնտեսական և դիվանագիտական լծակները բավարար չեն:

Հակամարտություններին արձագանքելու տեսանկյունից Եվրամիության ավելի ակտիվ քաղաքականության հիմքերը դրվեցին 1999 թվականին, երբ սկսեց մշակվել ԵՄ Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականությունը: Վերջինս մասամբ կարելի է համարել ԵՄ Ընդհանուր արտաքին քաղաքականության շրջանակներում Հարավսլավիայում ծավալվող հակամարտություններին ոչ համարժեք արձագանքելու ԵՄ պատասխանը: Նույն շրջանում այլ կազմակերպություններ նույնպես, մասնավորապես՝ ՄԱԿ-ը, զգալիորեն ընդլայնեցին հակամարտությունների կարգավորման գործընթացում իրենց դերակատարությունը: Թեև ի տարբերություն ՄԱԿ-ի, Եվրամիության դերակատարությունը, հատկապես 1990-ական թվականների վերջին, բավական սահմանափակ էր, նոր քաղաքականության մշակմամբ հիմքեր ստեղծվեցին ԵՄ ընդհանուր պաշտպանական համակարգի ձևավորման համար:

ԵՄ-ն, որը նախկինում գրեթե բացառապես ՄԱԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ համագործակցային հիմքերով աշխատող կառույց էր, նոր աշխարհակարգի գործընթացներով պայմանավորված, այսօր զարգացրել է տարբեր մեխանիզմներ՝ անվտանգային և պաշտպանական ոլորտներում ինքնավար գործողություններ իրականացնելու համար: 2016 թվականից սկսած այդ գործընթացում պաշտոնապես կենտրոնական տեղ է զբաղեցնում եվրոպական «ռազմավարական ինքնավարություն» հասկացությունը, որի հատկապես ռազմաքաղաքական չափումը լուրջ հակասությունների ու տարակարծությունների պատճառ է դարձել:

Թեև տեսականորեն ռազմավարական ինքնավարության գաղափարը թվում է գրավիչ, սակայն գործնականում դրա իրացումը կապված է լուրջ մարտահրավերների հետ, ինչն առավել ակնհայտ դարձավ Ուկրաինայում ընթացող պատերազմական գործողությունների լույսի ներքո:

ԵՄ պաշտպանական քաղաքականության ձևավորման ընթացքն ու խնդիրները

ԵՄ պաշտպանական քաղաքականության ձևավորման փորձերը սկսվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նախ 1952թ. ստեղծվեց Աժիի և պողպատի եվրոպական համայնքը՝ Ֆրանսիայի տնտեսական պլանավորման հանձնաժողովի նախագահ և եվրոպական ինտեգրման ջատագով Ժան Մոնեի նախաձեռնությամբ, ով նաև առաջ քաշեց Եվրոպական պաշտպանական համայնքի ստեղծման գաղափարը: Համայնքի ստեղծման մասին պայմանագիրը հիմնադիր վեց պետությունները ստորագրեցին 1952թ. մայիսին, սակայն 1954թ. Ֆրանսիայի խորհրդարանը հրաժարվեց այն վավերացնել: Հիմնական մտահոգությունը կապված էր Ֆրանսիայի ինքնիշխանության դեմ ոտնձգության հետ, ինչն անընդունելի էր Երկրորդ համաշխարհային պատերազմում կրած պարտության և օկուպացիայի փորձից հետո: Հաշվի առնելով այն, որ բոլոր վեց հիմնադիր երկրների խորհրդարանների վավերացումը պարտադիր պայման էր, պաշտպանական ինտեգրման եվրոպական փորձը տապալվեց¹:

Պաշտպանական ինտեգրման ձախողումից հետո եվրոպական ինտեգրումն առավելապես կենտրոնացավ տնտեսական հարցերի վրա: Ռազմական բաղադրիչը կրկին ուշադրության կենտրոնում հայտնվեց 1990-ական թվականների սկզբին, երբ Բալկաններում բռնկվեց սուր հակամարտություն: Եվրոպական

¹ **Retter L. et al**, European Strategic Autonomy in Defence: Transatlantic Visions and Implications for NATO, US and EU Relations, UK, RAND Corporation, 2021, 9-10.

համայնքը տարածաշրջան ուղարկեց Լյուքսեմբուրգի, Իտալիայի և Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարներից կազմված եռյակին: Դիվանագիտական այցը գլխավորող Լյուքսեմբուրգի արտգործնախարար Ժակ Պուսը հրապարակավ հայտարարեց, որ «Եկել է ոչ թե ամերիկացիների, այլ եվրոպացիների ժամը...»²: Այդ հաստատագրումը ակադեմիական և լրատվական տարբեր տեքստերում հաճախ հեզնական երանգով է օգտագործվում՝ մատնանշելու եվրոպական դիվանագիտության ակնհայտ ձախողումը Հարավսլավիայի ճգնաժամին արձագանքելու գործում³: Այդ ձախողումից ընդամենը մեկ տարի անց 1992թ. Մասաթրիխտի դաշնագրով սկիզբ դրվեց միասնական ինստիտուցիոնալ կառույցի՝ Եվրոպական անվտանգային ընդհանուր քաղաքականությանը: Վերջինս ներառում էր Միության անվտանգության հետ կապված բոլոր հարցերը, այդ թվում՝ «ընդհանուր պաշտպանական քաղաքականության ձևավորումը, որը ժամանակի ընթացքում պետք է հանգեցներ ընդհանուր պաշտպանական համակարգի ձևավորմանը»⁴: Այդուհանդերձ, թեև Մասաթրիխտի դաշնագրով սահմանվեցին հավակնոտ նպատակներ անվտանգային և պաշտպանական ոլորտներում, միայն 1990-ական թվականների վերջին՝ Բալկաններում ընթացող պատերազմից և Միացյալ Թագավորության քաղաքականության մեջ արձանագրված փոփոխություններից հետո, ստեղծվեցին բարենպաստ պայմաններ եվրոպական անվտանգային ու պաշտպանական քաղաքականության զարգացման համար:

Պատմականորեն Միացյալ Թագավորությունն անվտանգային և պաշտպանական միասնական քաղաքականությունը դիտարկում էր որպես «չարիք»՝ փոխարենը նախընտրելով ավելի

² **Glaurdic J.**, *The Hour of Europe: Western Powers and the Breakup of Yugoslavia*, London, Yale University Press, 2011.

³ **Cooley L.**, *The European Union's Approach to Conflict Resolution: Transformation or Regulation in the Western Balkans*, US, Routledge, 2019, p. 1.

⁴ Treaty on European Union, Article J(4), <https://treaties.un.org/doc/Publication/UNTS/Volume%201757/volume-1757-I-30615-English.pdf>.

բարձր ինտենսիվության գործողությունները վերապահել ՆԱՏՕ-ին: Մակայն Լեյբորիստական կառավարության օրոք (1997-2010) երկիրը որդեգրեց ավելի պրագմատիկ քաղաքականություն՝ նպատակ ունենալով համագործակցության ընդհանուր եզրեր գտնել եվրոպական պետությունների հետ, ինչպիսին է օրինակ Ֆրանսիան, որը ձգտում էր Ատլանտյան դաշինքից ստանալ ավելի մեծ ինքնավարություն⁵: Ավելին, հենց Միացյալ Թագավորությունը և Ֆրանսիան նախաձեռնեցին Եվրոպական անվտանգային և պաշտպանական քաղաքականության (հետագայում՝ Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականություն) ակտիվացման գործընթացը, որն ավարտվեց 1998թ. Մեն Մալոյի հռչակագրի ընդունմամբ: Վերջինս նախատեսում էր ինքնավար գործողությունների ներուժ ունեցող եվրոպական ռազմական ուժերի ստեղծում⁶:

Կոնֆլիկտային իրավիճակներում Եվրամիության միջամտության հնարավորությունները զգալիորեն մեծացան «ԵՄ-ի ապագայի վերաբերյալ» 2001թ. դեկտեմբերին Եվրոպական խորհրդի կողմից Լաքենի հռչակագրի⁷ ընդունումից հետո: Վերջինս դրեց այն մեխանիզմի հիմքերը, որը հետագայում հայտնի դարձավ որպես Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականություն: Կարևոր նշանակություն ունեցան նաև 2001թ. Գյոտեբորգի ծրագիրը, որը հակամարտությունների կանխարգելումը դիտարկում էր որպես Միության արտաքին քաղաքականության առանցքային նպատակ, Եվրոպական անվտանգության ռազմավարությունը (2003), Լիսաբոնի համաձայնագիրը (2007), Եվրոպա-

⁵ **Dyson T.**, The Impertave for British Leadership on Pooling and Sharing, in Fiott D. (eds), *The Common Security and Defence Policy: National Perspectives*, *Egmont Paper* 79, 2015, p. 21.

⁶ **Kashmeri S.**, *The North Atlantic Treaty Organization and the European Union's Common Security And Defense Policy: Intersecting Trajectories*, Strategic Studies Institute research report, 2011.

⁷ Laeken Declaration on the Future of the European Union, 15 December 2001, https://www.cvce.eu/en/obj/laeken_declaration_on_the_future_of_the_european_union_15_december_2001-en-a76801d5-4bf0-4483-9000-e6df94b07a55.html.

կան խորհրդի եզրակացությունները (2011) և Եվրոպական Միության գլոբալ ռազմավարությունը (2016)⁸:

2007թ. ստորագրված և 2009թ. ուժի մեջ մտած Լիսաբոնի համաձայնագիրը Եվրամիությանն ու անդամ պետություններին տրամադրում էր հակամարտությունների կանխարգելման և դրանց արձագանքման ավելի լայն մանդատ: Այդ համաձայնագրով Եվրոպական անվտանգային և պաշտպանական քաղաքականությունը ստացավ նոր անուն՝ Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականություն, որն էլ իր հերթին դարձավ ԵՄ Ընդհանուր անվտանգային և արտաքին քաղաքականության հիմնական բաղկացուցիչ մաս: Այն ներառում է քաղաքացիական առաքելություններ և ռազմական գործողություններ՝ խաղաղության պահպանման, հակամարտությունների կանխարգելման և միջազգային անվտանգության ապահովման նպատակով՝ ՄԱԿ Կանոնադրության սկզբունքներին համապատասխան: Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականությունը ենթադրում է նաև անդամ պետությունների հավաքական ինքնապաշտպանություն, ինչպես նաև Մշտական կառուցվածքային համագործակցություն Միության շրջանակում: Լիսաբոնի համաձայնագրով սահմանվեց նաև Միության արտաքին հարաբերությունների և անվտանգության քաղաքականության Բարձրագույն ներկայացուցչի պաշտոնը⁹:

Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելուց ի վեր Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականությունը զգալի զարգացում է ապրել՝ ինչպես քաղաքական, այնպես էլ ինստիտուցիոնալ առումով: *Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության* (EEAS) ստեղծումը վճռորոշ նշանակություն ունեցավ քաղաքացիական ճգնաժամերի կառավարման ոլորտում, իսկ *Եվրոպական Միության ռազմական շտաբի* (EUMS)

⁸ **Mustasilta K.**, Preventing What for Whom?: EU Conflict Prevention Efforts in Pursuit of Autonomy, *European Foreign Affairs Review*, 27, Special Issue, 2022, 39 – 60.

⁹ Treaty of Lisbon, 13 December 2007, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A12007L%2FTXT>.

ստեղծումը կարևոր նշանակություն ունեցավ ռազմական համագործակցության ինստիտուցիոնալացման համար¹⁰:

Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականության զարգացման սկզբնական շրջանում այն ընկալվում էր ոչ միանշանակորեն: Եթե ոլորտի որոշ մասնագետներ¹¹ դա դիտարկում էին որպես ԵՄ-ի միջազգային ազդեցության մեծացմանն ուղղված կարևոր քայլ, ապա հնչեցվում էին նաև կարծիքներ¹², որ դա կարող է լինել սպառնալիք ԵՄ-ի՝ որպես քաղաքացիական ուժի (civilian power), կարողությունների զարգացման համար: Մտահոգությունները կապված էին հիմնականում ռազմական բաղադրիչի համար ավելի շատ ռեսուրսների հնարավոր տրամադրման, քաղաքական որոշումների կայացման ոչ այնքան թափանցիկ մշակույթի ստեղծման և Եվրամիության արտաքին իմիջի հետ¹³: Վերջինս առավելապես կապված է ԵՄ-ի՝ որպես «նորմատիվային ուժի» բնորոշման հետ: Եզրույթն առաջ է քաշել Յան Մաներսը, ով պնդում էր, որ ԵՄ-ի «նորմատիվային ուժը» բխում է դրա հիմքում ընկած և համաձայնագրերում ամրագրված արժեքներից ու նորմերից: Մաներսը նշում էր, որ եթե հակամարտության կողմերը կիսում են հակամարտությունների կարգավորման ԵՄ տեսլականը կամ ընդունում են եվրոպական ինտեգրման գործընթացը որպես մոդել և այդպիսով հավատում են ԵՄ-ի՝ որպես նորմատիվային ուժի գոյությանը, ապա այդ ուժը կարող է նպաստել հակամարտությունների կարգավորմանը նույնիսկ ԵՄ սահմաններից

¹⁰ **Karjalainen T., Savoranta V.**, The EU's Strategic Approach to CSDP Interventions: Building a Tenet fro Praxis, FIIA Analysis, 11, 2021,

¹¹ **Smith M.**, Europe's Common Security and Defence Policy: Capacity-Building, Experiential Learning and Institutional Design, UK, Cambridge University Press, 2017, 1-2; **Koutrakos P.**, The EU Common Security and Defence Policy, UK, Oxford University Press, 2013.

¹² **Duke S.**, CESDP: Nice's Overtrumped Success?, *European Foreign Affairs Review*, 6, 2, 2001, 155-175; **Smith K.**, The End of Civilian Power EU: A Welcome Demise or Cause for Concern?, *The International Spectator*, 35, 2, 2000, 11-28.

¹³ **Youngs R.**, The European Security and Defence Policy: What Impact on the EU's Approach to Security Challenges, *European Security*, 11 (2), 2002, 101-124:

դուրս¹⁴: Միաժամանակ, ըստ Էնգելբրեկտի և այլոց, մի շարք առումներով այդ եզրույթը ոչ թե ճշգրիտ արտացոլում է կազմակերպության գործողությունները, այլ ԵՄ-ի՝ որպես արտաքին քաղաքական դերակատարի, իմիջի նկարագրությունն է¹⁵:

Նորմերի և ֆունկցիոնալ մոտեցման վրա հիմնված ԵՄ քաղաքականությունը զգալի փոփոխությունների է ենթարկվել հատկապես 2003 թվականից ի վեր, երբ ուժային քաղաքականությունը սկսեց գերիշխել միջազգային համակարգում՝ մասամբ Միացյալ Նահանգների Իրաք ներխուժումից հետո¹⁶: Այդ ժամանակվանից ի վեր ԵՄ-ն նախաձեռնել է քաղաքացիական և ոստիկանական գործողություններ Բոսնիա և Հերցեգովինայում, ռազմական գործողություններ Նախկին Հարավսլավիայի Մակեդոնական Հանրապետությունում, ռազմական գործողություններ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ԿԴՀ), ոստիկանական առաքելություն Մակեդոնիայում, իրավունքի գերակայության առաքելություն Վրաստանում և այլն¹⁷:

Թեև Եվրամիությունն ի սկզբանե ստանձնել էր հանձնառություն՝ անմիջականորեն աջակցելու ՄԱԿ-ի խաղաղության հաստատմանն ուղղված գործողություններին, ակնհայտ էր, որ Ընդհանուր անվտանգային և պաշտպանական քաղաքականության ինքնավար բնույթը ԵՄ-ին հնարավորություն էր տալու զարգացնել հակամարտությունների արձագանքման սեփական մոտեցումներն ու մեխանիզմները: Չնայած այդ մեխանիզմները հնարավոր եղավ մոբիլիզացնել ԵՄ արտաքին գործողությունների ծառայության շրջանակներում, սակայն դրանց գործնական իրացման հետ կապված կան լուրջ խոչընդոտներ: Մի կողմից դրանք ներքին

¹⁴ **Manners I.**, Normative power Europe: A contradiction in terms?, *Journal of Common Market Studies*, 40, 2, 2002, 235–258.

¹⁵ **Engelbrekt A., et al.**, The European Union in a Changing World Order: What is at Stake?, in *The European Union in a Changing World Order: Interdisciplinary European Studies*, US, Palgrave Macmillan, 2020, p. 9.

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ **Britz M., Eriksson A.**, The European Security and Defence Policy: A Fourth System of European Foreign Policy, *Politique Européenne*, 3, 17, 2005, 35-62.

գործոններ են՝ կապված այդ մեխանիզմների գործարկման թերությունների հետ, որոնք առավել համապարփակ ներկայացրել են Յունկոսն ու Բլոքմանսը¹⁸: Դրանց թվում են 1) վաղ նախագուշացում-արձագանքում կապի բացակայությունը, 2) հակամարտությունների կանխարգելման և խաղաղաշինության գործընթացներում այլ միջազգային գործընկերների հետ համագործակցության բարելավման խնդիրը, 3) քաղաքացիական և ռազմական բաղադրիչների համադրման թերությունները, 4) հակամարտությունների կանխարգելման և խաղաղաշինության գործընթացներում տեղական մասնակցության մեծացման խնդիրը: Մյուս կողմից, այդ գործիքակազմերի օգտագործումը բախվում է լուրջ աշխարհաքաղաքական խնդիրների, որոնք դիտարկվում են ստորև:

«Ռազմավարական ինքնավարություն» հասկացության ներմուծումը նոր աշխարհակարգի հաստատման գործընթացների համատեքստում

2016 թվականից ի վեր ԵՄ պաշտոնական խոսույթում ակտիվորեն շրջանառվում է «ռազմավարական ինքնավարություն» հասկացությունը, ինչին առանձնահատուկ անդրադարձ է արված 2016 թվականի ԵՄ Գլոբալ ռազմավարության¹⁹ փաստաթղթում: Վերջինս փոխարինում է 2003թ. Եվրոպական անվտանգության ռազմավարությանը և սահմանում է ԵՄ հավակնությունների շրջանակը միջազգային անվտանգության և պաշտպանության ոլորտներում: Նոր ռազմավարության մեջ ընդգծվում է ռազմավարական ինքնավարության խթանման անհրաժեշտության մասին՝ ԵՄ քաղաքացիների ընդհանուր շահերը, ինչպես նաև ԵՄ սկզբունքներն ու արժեքներն առաջ մղելու նպատակով: Նշվում է, որ հավակնությունների և ռազմավարական ինքնավարության

¹⁸ **Juncos A., Blockmans S.**, The EU's role in Conflict prevention and Peacebuilding: Four Key Challenges, *Global Affairs*, 1, 2018, 1-10.

¹⁹ A Global Strategy for the European Union's Foreign and Security Policy, Brussels, 14 November 2016, https://www.eeas.europa.eu/eeas/global-strategy-european-unions-foreign-and-security-policy_en.

համապատասխան մակարդակը կարևոր է Եվրոպայի՝ իր սահմաններում և սահմաններից դուրս խաղաղություն հաստատելու և անվտանգությունը պահպանելու կարողությունների զարգացման համար: Ընդհանուր առմամբ, «ռազմավարական ինքնավարության» էությունն ավելի հստակ արտահայտում է 2016թ. ԵՄ խորհրդի եզրակացության մեջ ներառված հետևյալ ձևակերպումը՝ «*Ինքնուրույն գործելու կարողություն, երբ և որտեղ անհրաժեշտ է, և գործընկերների հետ աշխատելու կարողություն, այնտեղ, որտեղ հնարավոր է*»²⁰: Ռազմավարական ինքնավարությունը չի ենթադրում միայն կոշտ ուժի կիրառում. տարբեր ԵՄ պաշտոնյաներ այն մեկնաբանում են պաշտպանական դաշինքների ավանդական շրջանակից դուրս, մասնավորապես, ԵՄ տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացի և գլոբալ նորմերն ու քաղաքականությունները ձևավորելու կարողության համատեքստում²¹: Միաժամանակ, ակնհայտ է, որ թեև «ռազմավարական ինքնավարությունը» չի վերաբերում բացառապես ռազմաքաղաքական ոլորտին, անվտանգությունը դրա առավել վիճահարույց ու կարևոր չափումներից է:

Ռազմավարական ինքնավարության խոսույթի ակտիվացումը եղավ այն բանից հետո, երբ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը կոչ արեց ձեռնամուխ լինել ավելի «ինքնիշխան, միավորված և ժողովրդավարական Եվրոպայի» վերահաստատմանը²², իսկ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարեց, որ Եվրոպան պետք է ինքնուրույն տնօրինի իր ճակատագիրը, քանզի այլևս չի կարող անվերապահորեն ապավինել Միացյալ

²⁰ Council conclusions on implementing the EU Global Strategy in the area of Security and Defence, Council Conclusions (14 November 2016), <https://www.consilium.europa.eu/media/22459/eugs-conclusions-st14149en16.pdf>.

²¹ **Helwig N., Sinkkonen V.**, Strategic Autonomy and the EU as a Global Actor: The Evolution, Debate and Theory of a Contested Term. *European Foreign Affairs Review*, 27, Special Issue, 2022, 1–20.

²² President Macron Gives Speech on New Initiative for Europe, Élysée, 26 September 2017, <https://www.elysee.fr/en/emmanuel-macron/2017/09/26/president-macron-gives-speech-on-new-initiative-for-europe>.

Նահանգներին²³: Այդ հայտարարությունները հաջորդեցին այն բանին, երբ Միացյալ Նահանգները որոշեց դուրս գալ Իրանի հետ կնքված միջուկային համաձայնագրից, որում ԵՄ-ն ներդրել էր զգալի քաղաքական կապիտալ:

Պատահական չէ, որ ռազմավարական ինքնավարության մասին քննարկումները մեծամասամբ ընթանում են ԵՄ-Միացյալ Նահանգներ հարաբերությունների լույսի ներքո, քանզի վերջինս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հյուսիսատլանտյան դաշինքի միջոցով Եվրոպայի անվտանգային բաղադրիչի գլխավոր երաշխավորն է: Սառը պատերազմից հետո Միացյալ Նահանգների դերակատարությունն էլ ավելի ակնհայտ դարձավ Բալկանների ճգնաժամի արդյունքում, որը Եվրոպան ի վիճակի չէրավ միայնակ հանգուցալուծել: Ըստ Քեմերոնի, տասնամյակներ շարունակ Միացյալ Նահանգներից ունեցած կախվածությունը հանգեցրել է ռազմավարական ինքնավարությանն առնչվող տարբեր խնդիրների: Նախ, այն խոչընդոտել է Եվրոպայում իրական ռազմավարական մտածողության զարգացմանը: Ռազմաքաղաքական ոլորտում անդամ պետությունների հավաքական ներդրումը քիչ է կամ առհասարակ բացակայում է. նրանք դեռևս կետրոնացած են սեփական ազգային անվտանգության քաղաքականությունների մշակման վրա: Երկրորդ, Եվրոպան Վաշինգտոնում որոշումներ կայացնող շրջանակներից դուրս է՝ անկախ նրանից, թե ով է ղեկավարում Սպիտակ տունը: Օրինակ, Աֆղանստանի հակամարտության վերջին 20 տարիների ընթացքում բոլոր կարևոր որոշումներն ընդունվել են՝ հաշվի առնելով բացառապես այն, թե ինչպես դրանք կազդեն ԱՄՆ ներքին քաղաքականության վրա: Դրա գազաթնակետը եղավ Աֆղանստանից զորքերի դուրսբերումը՝ առանց դաշնակիցների հետ խորհրդակցելու: Երրորդ, որպես դրա հետևանք, եվրոպացիները ստիպված են համաձայնել Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական որոշումների հետ

²³ Angela Merkel: Europe Must Take 'Our Fate' Into Own Hands, Politico, 2017, <https://www.politico.eu/article/angela-merkel-europe-cdu-must-take-its-fate-into-its-own-hands-elections-2017/>.

նույնիսկ այն դեպքում, երբ դրանք համարում են ոչ արդարացված, ինչպես Աֆղանստանի, Իրաքի և «սահաբեկչության դեմ պատերազմի» դեպքում²⁴:

Թեև Միացյալ Նահանգների տարբեր ներկայացուցիչներ պարբերաբար կոչ են անում իրենց եվրոպացի գործընկերներին ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել տարածաշրջանային անվտանգության պահպանման համար, այդուհանդերձ ակնհայտորեն կան մտավախություններ, որ ԵՄ ավելի խորը պաշտպանական ինտեգրումը կարող է կրկնօրինակել կամ խարխլել ՆԱՏՕ-ի կառույցը, նվազեցնել ԱՄՆ ազդեցությունը անդրատլանտյան անվտանգային հարցերում և, ի վերջո, խոչընդոտել ԵՄ պաշտպանական համակարգերի շուկաներում Միացյալ Նահանգների մասնակցությանը: Ընդ որում, այդ մտահոգությունները հնչեցվում էին նաև ավելի վաղ շրջանում՝ նախքան ռազմավարական ինքնավարության պաշտոնական ներկայացումը: Ի պատասխան 1998թ. դեկտեմբերին Սեն Սալոյի գազաթնաժողովի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի և Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլերի կոչին՝ զարգացնելու ԵՄ ինքնավար որոշումների կայացման և գործողությունների իրականացման կարողություններ, ԱՄՆ պետքարտուղար Մ. Օլբրայթը նախազգուշացնում էր, որ Անվտանգության և պաշտպանության ոլորտներում եվրոպական ինքնության (Europan Security and Defence Identity) ստեղծմանն ուղղված ջանքերը չպետք է հանգեցնեն ՆԱՏՕ-ի ստորադասման, անդամ երկրների միջև խտրականության և գործող կառույցների կրկնօրինակման²⁵: 1999թ. և 2000թ. ԱՄՆ Կոնգրեսը և պաշտպանության նախարար Ուիլիամ Քոհենը իրենց մտահոգությունն էին հայտնում արագ արձագանքման եվրոպական ուժերի ստեղծման վերաբերյալ: Նման մտահոգու-

²⁴ **Cameron F.**, EU Startegic Autonomy – A Perennial Pipe Dream?, European Policy Centre, 2022, <https://www.epc.eu/en/publications/EU-strategic-autonomy-A-perennial-pipe-dream~4565a0>.

²⁵ **Retter et al...**, p. 4, https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RRA1300/RRA1319-1/RAND_RRA1319-1.pdf.

թյուններ կային նաև Ջորջ Բուշ կրտսերի նախագահության շրջանում: ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը նշում էր, որ Միացյալ Նահանգները չի ընդունի ԵՄ այն անկախ կառույցները, որոնք կրկնօրինակում են ՆԱՏՕ-ի արդեն գոյություն ունեցող ենթակառուցվածքները²⁶:

Եվրոպական ռազմավարական ինքնավարությանն ուղղված ջանքերը մեծ թափ ստացան հատկապես Թրամփի պաշտոնավարման շրջանում (2016-2020թթ.), ինչը համընկավ նաև ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալու շուրջ բանակցությունների ավարտի հետ: 2016թ. Միացյալ Նահանգների նախագահական ընտրություններից հետո միջազգային համակարգում տեղի ունեցան զգալի տեղաշարժեր՝ պայմանավորված նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփի՝ «Նախ՝ Միացյալ Նահանգները»²⁷ մոտեցման որդեգրմամբ: Դրա համաձայն Միացյալ Նահանգների շահերը կարող են լավագույնս իրացվել մեկուսացման քաղաքականության և, որպես դրա հետևանք, իր սահմաններից դուրս տարածաշրջանային առճակատումներում ոչ նշանակալի ներգրավվածության արդյունքում: Այդ մոտեցման շրջանակներում էր, որ նախագահ Թրամփը 2019թ. հոկտեմբերին հայտարարեց Սիրիայի հյուսիս արևելքից ամերիկյան զորքերի դուրսբերման մասին՝ հրահրելով թուրքական հարձակումը Ազգային ինքնապաշտպանական խմբավորումների կողմից առաջնորդվող Սիրիայի դեմոկրատական ուժերի վրա, որոնք Անկարայի պնդմամբ իր անվտանգության համար ներկայացնում են սպառնալիք՝ Քրդստանի աշխատավորական կուսակցության հետ ունեցած կապերի պատճառով: Այդուհանդերձ, միջազգային ճնշումների ներքո Թրամփը համաձայնեց զորքերը

²⁶ **Thompson J.**, European Strategic Autonomy and the US, CSS Analysis in Security Policy, 248, September 2019, <https://css.ethz.ch/content/dam/ethz/special-interest/gess/cis/center-for-securities-studies/pdfs/CSSAnalyse248-EN.pdf>.

²⁷ 44-օրյա պատերազմը և «Նախ՝ Միացյալ Նահանգները»

դիվանագիտության աստիճանական անկումը, Լույս հիմնադրամ, 2021, <https://www.luys.am/img/artpic/small/52d80d7e1d5cd727933844-day-war-and-the-US.pdf>.

պահել տարածքում²⁸: Թրամփի ակնհայտ սկեպտիցիզմը դաշինքների ու բազմակողմ համագործակցության նկատմամբ և եվրոպական ինտեգրման հանդեպ բացահայտ հակակրանքը որևէ կասկած չէին թողնում, որ անդրատլանտյան գործընկերությունը զգալի փոփոխությունների է ենթարկվելու: Որոշ գնահատականներով Թրամփի նախագահության շրջանում անդրատլանտյան հարաբերությունները գտնվում էին Սառը պատերազմի ավարտից ի վեր իրենց ամենացածր կետում՝ գերազանցելով նույնիսկ 2003թ. Իրաքյան պատերազմի շրջանը²⁹:

Վերոնշյալ զարգացումների արդյունքում ռազմավարական ինքնավարության մասին խոսույթից անցում կատարվեց գործնական մակարդակի: ԵՄ-ն համաձայնության եկավ Ռազմական պլանավորման և վարման կարողությունների ռազմական շտաբի ստեղծման մասին, որը Միացյալ Թագավորությունը տևական ժամանակ արգելափակում էր՝ ՆԱՏՕ-ի կառույցները կրկնօրինակելու մտավախությունից: Պաշտպանական ինտեգրումն ավելի մեծ թափ ստացավ 2017թ. մայիսին Ֆրանսիայում Է. Մակրոնի նախագահ ընտրվելուց և արդյունքում ֆրանս-գերմանական տանդեմի վերագործարկումից հետո: 2017թ. հունիսին ԵՄ-ն գործարկեց Եվրոպական պաշտպանության հիմնադրամը, որի նպատակն է ֆինանսավորել պաշտպանական կարողությունների համատեղ հետազոտությունն ու զարգացումը, իսկ 2017թ. դեկտեմբերին ստեղծվեց Մշտական կառուցվածքային համագործակցությունը (PESCO)³⁰:

Միացյալ Նահանգների նոր նախագահական ընտրություններից հետո «ռազմավարական ինքնավարության» մասին քննարկումներն ակտիվացան: Ընդ որում, եթե Ֆրանսիայի դիրքորոշումն

²⁸ US Military Exit rom Syria Unlikely Anytime Soon, Officials Say, 2021, Aljazeera, <https://www.aljazeera.com/news/2021/10/26/will-us-leave-syria>

²⁹ **Whineray D.**, Trump Has Irrevocably Changed American Relations with Europe and Biden Probably Can't Fix It, Carnegie Endowment Papers, 2020, <https://carnegieendowment.org/2020/05/06/trump-has-irrevocably-changed-american-relations-with-europe-and-biden-probably-can-t-fix-it-pub-81739>.

³⁰ **Retter et al...**, pp. 12-15.

առանձնապես չէր փոխվել, ապա Գերմանիայի պաշտոնական դիրքորոշման մեջ նկատելի էին որոշակի փոփոխություններ: Մասնավորապես, Գերմանիայի պաշտպանության նախարարը նշում էր, որ եվրոպացիները պետք է հրաժարվեն եվրոպական ռազմավարական ինքնավարության «պատրանքներից», քանի որ նրանք չեն կարողանա փոխարինել Միացյալ Նահանգներին՝ որպես անվտանգության երաշխավոր³¹: Ի հակադրություն դրան, Մակրոնը շարունակում էր պնդել, որ եվրոպացիները չեն կարող վստահ լինել Միացյալ Նահանգների հուսալիության մեջ և որ Բայդենի հաղթանակը չպետք է շեղի նրանց ռազմավարական ինքնավարության գաղափարն առաջ մղելու ջանքերից³²: Ինչպես իր հարցազրույցներից մեկում նշում էր Մակրոնը, «Մերձավոր Արևելքը և Աֆրիկան ոչ թե Միացյալ Նահանգների, այլ Եվրոպայի հարևանությունում են»³³:

Ի տարբերություն Թրամփի վարչակազմի, Բայդենն ընդգծում էր դաշինքների և միջազգային համագործակցության կարևորությունը: Միաժամանակ, տարբեր ոլորտներում Թրամփի առաջ քաշած օրակարգի չեղարկման գործընթացն ընթանում էր շատ դանդաղ: ԵՄ-ի հետ Թրամփի շրջանի պողպատի և ալյումինի մաքսատուրքերի մեղմացման վերաբերյալ գործարքը տեղի ունեցավ միայն 2021թ. հոկտեմբերի վերջին, իսկ Իրանի միջուկային համաձայնագրի շուրջ բանակցությունները ձգվել են անորոշ ժամանակով: Աֆղանստանում Բայդենը կյանքի կոչեց նախորդ վարչակազմի և թալիբանների միջև կնքված «պատմական

³¹ Europe Still Needs America, Politico, November 2, 2020, <https://www.politico.eu/article/europe-still-needs-america/>.

³² Incoming Joe Biden Presidency Exposes Old French-German Rift on Defence, The Economic Times, 2020, <https://economictimes.indiatimes.com/news/defence/incoming-joe-biden-presidency-exposes-old-french-german-rift-on-defence/articleshow/79320209.cms>.

³³ French President Macron Calls for European ‘Strategic Autonomy’, USNI News, February 8, 2021, <https://news.usni.org/2021/02/08/french-president-macron-calls-for-european-strategic-autonomy>.

պայմանագիրը»³⁴, որն ի վերջո ավարտվեց 2021թ. Աֆղանստանից ամերիկյան զորքերի լիարժեք դուրսբերմամբ: Չորքերի դուրսբերման ժամկետներն ու բնույթը սահմանվեցին բացառապես Միացյալ Նահանգների կողմից՝ ցույց տալով, որ չնայած Միացյալ Նահանգների միջազգային պարտավորությունները և դաշնակիցների հետ հարաբերությունները վերանայելու Բայդենի խոստումներին, «նախ՝ Միացյալ Նահանգները» մոտեցման տարրերը դեռ առկա են: Դրան հաջորդեց Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ավստրալիայի միջև ռազմավարական գործընկերության մեկնարկի մասին 2021թ. սեպտեմբերի 15-ի հայտարարությունը՝ հայտնի որպես AUKUS (Australia, United Kingdom, United States), որն անուղղակիորեն նախատեսված էր Չինաստանին հակազդելու համար: Դաշինքի շրջանակներում Ավստրալիայի ռազմածովային նավատորմն առաջին անգամ հնարավորություն էր ստանալու կառուցել ատոմային սուզանավեր Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի աջակցությամբ՝ այդպիսով խզելով ֆրանսիական սուզանավերի գնման նախորդ՝ 56 միլիարդ եվրոյի գործարքը: Ֆրանսիացիների ցասումը պայմանավորված էր ոչ միայն համաձայնության չեղարկմամբ, այլև նոր գործարքի շուրջ բանակցությունների վերաբերյալ անտեղյակությամբ: Ֆրանսիան հետ կանչեց Միացյալ Նահանգներում և Ավստրալիայում իր դեսպաններին խորհրդակցությունների համար՝ միաժամանակ հետաձգելով ֆրանս-բրիտանական պաշտպանական գազաթնաժողովը, իսկ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը համաձայնագիրն անվանեց «թիկունքից հարված»³⁵:

Ակնհայտ էր, որ վերոնշյալ իրադարձությունները զգալիորեն ուժեղացրեցին ԵՄ-ՆԱՏՕ և ավելի լայն՝ անդրատլանտյան, հարաբերությունների նկատմամբ անապահովության զգացումը եվրոպացիների շրջանում՝ ավելի մեծ կարևորություն հաղորդելով

³⁴ US-Taliban Sign Historic Agreement, CNN, February 29, 2020, <https://edition.cnn.com/2020/02/29/politics/us-taliban-deal-signing/index.html>.

³⁵ **Besch S., Scazzieri L.**, After Afghanistan and AUKUS: What next for European defence?, Centre for European Reform, October, 2021, https://www.cer.eu/sites/default/files/insight_SB_LS_AUKUS_7.10.21.pdf.

ռազմավարական ինքնավարության անվտանգային բաղադրիչին: AUKUS-ի գործընթացին զուգահեռ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը վերահաստատեց Եվրոպական պաշտպանության միություն ստեղծելու անհրաժեշտությունը և հայտարարեց «Պաշտպանության գազաթնաժողովի» մասին 2022 թվականի առաջին կիսամյակի ընթացքում՝ Ֆրանսիայի նախագահությամբ³⁶:

Հղում անելով Աֆղանստանից գորքերի «քառսային դուրսբերմանը»՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելն առաջ էր քաշում հետևյալ հարցադրումը. «Ուրիշ ի՞նչ խոշոր աշխարհաքաղաքական իրադարձություն է անհրաժեշտ, որպեսզի Եվրոպան քայլեր ձեռնարկի՝ հասնելու որոշումների կայացման և գործողությունների ձեռնարկման գործում ավելի լայն ինքնավարության»³⁷: Նա նաև ընդգծում էր, որ նախորդ երկու տասնամյակներում տեղի ունեցած առանցքային իրադարձություններից Եվրոպան պետք է քաղի երեք հիմնական դասեր: Նախ, պատմության մեջ արմատացած բարդ իրավիճակների պայմաններում անհրաժեշտ է որոնել կոնկրետ իրավիճակին համապատասխան և կայուն լուծումներ: Երկրորդ, Եվրամիությունը կարող է արդյունավետորեն հաղթահարել գլոբալ մարտահրավերները միայն ձգտելով հասնել իր անդամների միջև մոտարկված և նույնիսկ միասնական մոտեցումների այն հարցերի շուրջ, որոնք հաճախ ազգային ինքնիշխանության շրջանակներում են: Երրորդ, ԵՄ կախվածությունները նվազեցնելու և սեփական ռազմավարական ինքնավարությունն ամրապնդելու անհրաժեշտությունն ավելի ու ավելի ակնհայտ է դառնում: Թեև նշվում էր, որ անհրաժեշտ է սերտորեն աշխատել Միացյալ Նահանգների և տարածաշրջանային գործընկերների հետ,

³⁶ The Idea of Strategic Autonomy as Pushed by Emmanuel Macron: Key to EU's Strategic Performance, Diplomatist, 18 January 2022, <https://diplomatist.com/2022/01/18/the-idea-of-strategic-autonomy-as-pushed-by-emmanuel-macron-key-to-eus-strategic-performance/>.

³⁷ Charles Michel, The chaotic withdrawal in Afghanistan forces us to accelerate honest thinking about European defence, Press Release, **2 September 2021**, <https://www.consilium.europa.eu/en/european-council/president/news/2021/09/02/20210902-pec-newsletter-afghanistan/>.

այդուհանդերձ ընդգծվում էր նաև, որ այն աշխարհաքաղաքական տեղաշարժերը, որոնք տեղի ունեցան տարբեր տարածաշրջաններում, ցույց տվեցին, որ Եվրոպան պետք է զարգացնի իր հայտնի «ռազմավարական ինքնավարությունը», որպեսզի պատրաստ լինի դիմակայելու այն մարտահրավերներին, որոնք ի վերջո ազդում են հենց Եվրոպայի վրա:

Ռազմավարական ինքնավարության քննարկման համատեքստում առանձնակի ուշադրություն կար ԵՄ-ՆԱՏՕ հարաբերություններին: Թեև Եվրամիության համար ՆԱՏՕ-ի հետ ավելի սերտ հարաբերությունները եղել են անվտանգային նոր միջավայրին դիմակայելու անհրաժեշտ քայլերից, այդուհանդերձ երկու կազմակերպությունների միջև հարաբերություններին տևական ժամանակ բնորոշ էին ցածր մակարդակի համագործակցությունը և գաղափարական հակազդեցությունը: Պատճառներից էր նաև Կիպրոսի և Թուրքիայի միջև տևական պայքարը, այսպես կոչված «մասնակցային խնդիրը», ինչը խոչընդոտում էր իրական համագործակցությանը: Թուրքիան ժամանակ առ ժամանակ վետո է դնում տեղեկատվության փոխանակման և ԵՄ-ՆԱՏՕ հանդիպումներին Կիպրոսի մասնակցության վրա: Դա արվում է Եվրամիությանը հիշեցնելու համար, որ Եվրոպան պետք է լուծի Կիպրոսի խնդիրը, եթե ցանկանում է լիարժեք համագործակցել ՆԱՏՕ-ի հետ: Կիպրոսը, իր հերթին, մերժում է ԵՄ-ի որևէ պաշտոնական հարաբերություն ՆԱՏՕ-ի հետ՝ բացառությամբ «Բեռլին Պլյուս» սահմանափակ նախաձեռնությանը³⁸: 2021թ. սեպտեմբերին Եվրամիության Ռազմական կոմիտեի նախագահ Կլաուդիո Գրացիանոն կոչ արեց ստեղծել արագ արձագանքման եվրոպական ուժեր, ինչը «ցույց կտա Եվրամիության՝ որպես զլոբալ ռազմավարական

³⁸ «Բեռլին Պլյուս» հատուկ պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել դեռևս 2002 թվականին, ԵՄ-ին հնարավորություն են տալիս օգտագործելու ՆԱՏՕ-ի հավաքական միջոցներն ու հնարավորությունները՝ սեփական ռազմական գործողությունների իրականացման համար: **Acikmese S., Triantaphyllou D.**, The NATO–EU–Turkey trilogy: The Impact of the Cyprus Conundrum, *Southeast European and Black Sea Studies*, 2012, 12, 4, 555–573.

գործընկեր, հանդես գալու կամքը»: Ի պատասխան դրան, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յանս Ստոլտենբերգը հայտարարեց, որ սակավ ռեսուրսների պայմաններում պետք է կանխել ցանկացած փորձ՝ ուղղված զուգահեռ կառույցներ ստեղծելուն կամ գործող հրամանատարական կառույցները կնկնօրինակելուն³⁹: Իրարամերժ քննարկումների համատեքստում ԵՄ տարբեր ներկայացուցիչներ պարբերաբար նշում են, որ «Եվրոպական պաշտպանությունը չի ձևավորվում ի հակակշիռ ՆԱՏՕ-ի: Ընդհակառակը, ավելի ուժեղ Եվրոպան կնպաստի ավելի ամուր ու կայուն դաշինքի զարգացմանը»⁴⁰:

Ընդհանուր առմամբ, ԵՄ-ՆԱՏՕ հարաբերությունների համատեքստում ռազմավարական ինքնավարության մասին քննարկումները ծավալվում են երկու ուղղությամբ. նրանք, ովքեր եվրոպական նկրտումները տեսնում են ԵՄ-ՆԱՏՕ մրցակցության համատեքստում, և նրանք, ովքեր գտնում են, որ երկու կազմակերպություններն ունեն զգալիորեն տարբեր դերակատարություն և հստակ ուրվագծված մանդատ ու պարտականություններ, ուստի՝ փոխլրացնում են միմյանց⁴¹: Հիմնական հակասություններն առկա են Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անդամ պետությունների շրջանում: Մասնավորապես, Բալթյան երկրները, Լեհաստանը և, որոշ վերապահումներով, Ռումինիան, թերահավատորեն են վերաբերվում ազգային սպառնալիքներին ու մարտահրավերներին ԵՄ-ի դիմակայելու կարողությանը և դեմ են պաշտպանական ոլորտում ՆԱՏՕ-ի ազդեցության նվազեցմանն ուղղված ցանկացած գործողության՝ ի հաշիվ ԵՄ-ի ավելի ակտիվ դերակատարության⁴²: Նույնը վերաբերում է նաև անդրատլանտյան մշակույթի կրող

³⁹ **De Maio G.**, Opportunities to Deepen NATO-EU Cooperation, Foreign Policy at Brookings, 2021, p. 3.

⁴⁰ 'Don't be afraid' of EU defence ambitions, France tells NATO, Reuters, 2021, <https://www.reuters.com/world/europe/dont-be-afraid-eu-defence-ambitions-france-tells-nato-2021-10-22/>.

⁴¹ **Zandee D. et al**, European Strategic Autonomy in Security and Defense, Netherlands Institute of International Relations, Clingendael Report, 2020, p. 15.

⁴² **Bozhilov Y.**, Matching risk assessment and capabilities: Challenges to Central and Eastern European member states, *European View*, 21, 1, 2022, 36-47.

Նիդեռլանդներին կամ Ռուսաստանին սահմանակցող Ֆինլանդիային: Այդ երկրների քաղաքական շրջանակները նախընտրում են խոսել ոչ թե առավելապես բացասական երանգավորում ունեցող «ռազմավարական ինքնավարության», այլ «ռազմավարական պատասխանատվության» մասին, որը ենթադրում է ավելի մեծ ներդրում տարածաշրջանային անվտանգության պահպանման գործում, հավաքական գործելու պատրաստակամություն ու կարողություն և նվազեցնում է ուժեղ Եվրոպայի և ուժեղ անդրատլանտյան դաշինքի միջև հնարավոր հակասությունները⁴³: Նոր աշխարհակարգի հաստատման գործընթացներով պայմանավորված՝ այս երկրների մտահոգությունը, անկասկած, սահմանափակված չէ միայն անվտանգության և պաշտպանության հարցերով: Դա վերաբերում է նաև հետքերքսիթյան ԵՄ-ի ներսում ուժերի հավասարակշռությանն ու անդամ պետությունների շահերի ներկայացմանը: Ակնհայտորեն, մտավախություն կա, որ «Եվրոպական ինքնավարության» քողի տակ առաջ կնդվեն միայն ավելի ազդեցիկ Եվրոպական պետությունների շահերը:

Բրեքսիթի արդյունքում ազդարարվեց ոչ ֆորմալ եռյակ ղեկավարության ավարտը՝ Միության ղեկին թողնելով հարաբերականորեն առավել ազդեցիկ պետություններ Ֆրանսիան ու Գերմանիան: Ընդ որում, ռազմավարական ինքնավարությունն առավել հաճախ դիտարկվում է որպես «ֆրանսիական նախաձեռնություն»⁴⁴: Հատկանշական է այն փաստը, որ ֆրանսիացիներն են առաջին անգամ օգտագործել «ռազմավարական ինքնավարություն» հասկացությունը Անվտանգության և պաշտպանության մասին 1994թ. փաստաթղթում (առաջին փաստաթուղթը, որը հրապարակվել է

⁴³ **Libek E.**, European Strategic Autonomy: A Cacophony of Political Visions, International Centre for Defence and Security, <https://icds.ee/en/european-strategic-autonomy-a-cacophony-of-political-visions/>.

⁴⁴ **Franke U., Varma T.**, Independence Play: Europe's Pursuit of Strategic Autonomy, ECFR Papers, 2019, p. 4, https://ecfr.eu/special/independence_play_europes_pursuit_of_strategic_autonomy/; **Dempsey J.**, France's Military Pivot to Europe, Carnegie Europe papers, November 15, 2022, <https://carnegieeurope.eu/strategieurope/88403>.

Մառը պատերազմի ավարտից հետո): Ավելին, 2017թ. Ռազմավարական փաստաթղթի մի մասը վերնագրված է «Մեր պաշտպանական ռազմավարությունը. ռազմավարական ինքնավարությունը և եվրոպական հավակնությունները»: Բացի այդ, 2017թ. Սորբոնում տեղի ունեցած Մակրոնի հայտնի ելույթը և պաշտպանության ոլորտին առնչվող հետագա առաջարկությունները (մասնավորապես՝ Եվրոպական ինտերվենցիայի նախաձեռնության վերաբերյալ⁴⁵) Մակրոնին դարձնում են «ռազմավարական ինքնավարություն» գաղափարի առաջամարտիկ: 2022թ. հինգ տարի ժամկետով վերընտրված նախագահ Մակրոնն ամեն կերպ փորձում է օգտագործել Փարիզի վեցամսյա նախագահությունը Եվրոպական միության Խորհրդում, որպեսզի համոզի իր թերահավատ գործընկերներին, որ վերջապես եկել է եվրոպական պաշտպանության ժամը, և որ հնարավոր չէ այդ հարցում հավերժ ապավինել Միացյալ Նահանգների աջակցությանը, հատկապես այն դեպքում, երբ Վաշինգտոնն այժմ առավելապես կենտրոնացած է Չինաստանի հետ ռազմավարական մրցակցության վրա⁴⁶:

Չնայած ռազմավարական ինքնավարությունը մեկուսացման քաղաքականության համատեքստում ներկայացնելու տարբեր փորձերի՝ այն այդուհանդերձ ենթադրում է բազմակողմանիություն (multilateralism), որը սահմանվել էր որպես 2021թ. ԵՄ քաղաքական օրակարգի առաջնահերթություն⁴⁷: Այդ առումով հատկանշական էր 2021 թվականին Հնդկական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում համագործակցության վերաբերյալ ԵՄ նոր ռազմավար-

⁴⁵ **Novaky N.**, France's European Intervention Initiative: Towards a Culture of Burden Sharing, Wilfried Martens Centre for European Studies, Policy Brief, October 2018, <https://www.martenscentre.eu/wp-content/uploads/2020/06/france-european-intervention-burden-sharing.pdf>.

⁴⁶ Why Macron is Failing on Strategic Autonomy, Politico, May 26, 2022, <https://www.politico.eu/article/macron-fail-strategic-autonomy-france-eu-presidency-2022/>.

⁴⁷ Multilateralism and European Strategic Autonomy in a (Post)-Covid World, European Union External Action 15.11.2020, https://www.eeas.europa.eu/eeas/multilateralism-and-european-strategic-autonomy-post-covid-world-%C2%A0_en.

րությունը⁴⁸, որում ուրվագծվում է տարածաշրջանի կարևորությունը միջազգային կարգի ձևավորման և գլոբալ մարտահրավերներին դիմակայելու գործում, ինչպես նաև ընդգծվում է տարածաշրջանում աճող աշխարհաքաղաքական մրցակցությունը: Նոր ռազմավարության տեսանկյունից կարևորվում է հատկապես չինական գործոնը, քանզի ԵՄ-ՉՉՀ հարաբերությունները բավական բարդ են և ուղղակիորեն կապված Միացյալ Նահանգների հետ: ԵՄ-ն փորձում է հավասարակշռել իր քաղաքականությունը Չինաստանի նկատմամբ, որը միաժամանակ դիտարկվում է որպես «գործընկեր», «մրցակից» և «հակառակորդ»⁴⁹: Խոսույթի մակարդակում ՉՉՀ-ն աջակցում է եվրոպական ինտեգրմանն ու ինքնավարությանն ուղղված քաղաքականությանը՝ այն բնորոշելով որպես բազմաբևեռ, պակաս ամերիկակենտրոն աշխարհակարգի խթանման միջոց: 2021թ. դեկտեմբերին ՉՉՀ պետական խորհրդի անդամ Վանգը արտահայտեց Չինաստանի կառավարության հույսն առ այն, որ «Եվրոպան՝ որպես բազմաբևեռայնության գործընթացի կարևոր դերակատար, մոտ ժամանակներում կձևավորի անկախ, օբյեկտիվ և ռացիոնալ ընկալում Չինաստանի նկատմամբ և կխթանի ու կխորացնի Չինաստանի հետ փոխշահավետ համագործակցություն՝ «ռազմավարական ինքնավարության» մոտեցման տրամաբանությամբ»⁵⁰: Ակնհայտ է, որ թեև Չինաստանում քաջ գիտակցում են ԵՄ-ի՝ որպես գլոբալ քաղաքականության մեջ լիարժեքորեն անկախ դերակատարի և, առավել ևս, Միացյալ Նահանգներին հակակշիռ ներկայացնող ուժի ձևավորման անհնարինությունը, Չինաստանը կողջունի եվրոպական ինքնավար

⁴⁸ EU Strategy for Cooperation in the Indo-Pacific, February 2022, https://www.eeas.europa.eu/sites/default/files/eu-indo-pacific_factsheet_2022-02_0.pdf.

⁴⁹ **Poutala T. et al.**, EU Strategic Autonomy and the Perceived Challenge of China: Can Critical Hubs Be De-weaponized?, *European Foreign Affairs Review* 27, Special Issue, 2022, 79–98.

⁵⁰ The European Union and China, Congressional Research Service, February 14, 2022, <https://sgp.fas.org/crs/row/IF10252.pdf>.

րության ուղղությամբ ԵՄ ցանկացած քայլ, քանի դեռ այն չի դրսևորվում Չինաստանի նկատմամբ առճակատմամբ:

Չնայած ԵՄ-Միացյալ Նահանգներ հարաբերություններում վերջին շրջանում առկա խզումներին՝ ակնհայտ է, որ Միացյալ Նահանգները Եվրոպային քաղաքականապես առավել մոտ կանգնած գերտերություններից է, իսկ անվտանգության ոլորտում անփոխարինելի գործընկեր է (ԵՄ անդամ պետություններից 21-ն անդամակցում են նաև ՆԱՏՕ-ին): Ուստի, չափազանց բարդ է լինելու վարել այնպիսի քաղաքաքան գիծ, որը շեղվում է և նույնիսկ կտրվում է Վաշինգտոնից: Թեև ԵՄ տարբեր պաշտոնյաներ պարբերաբար ընդգծում են, որ ռազմավարական ինքնավարությունը որևէ կերպ չի հակադրվում արևմտյան կառույցներին, *այդ եզրույթն ինքնին ենթադրում է ԵՄ-ի ավելի վճռական ներգրավվածություն այնպիսի հակասական հարցերում և որոշումներում, որոնցից կազմակերպությունը տասնամյակներ շարունակ նախընտրում էր խուսափել*: Աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ այդ ներգրավվածությունն անխուսափելիորեն կարող է հակադրվել տարբեր գերտերությունների՝ այդ թվում Միացյալ Նահանգների մոտեցումներին ու շահերին: Հետևապես, ստեղծված իրավիճակում չափազանց կարևոր է ռազմավարական ինքնավարության հասկացության ու դրա հիմնական տարրերի ու սկզբունքների հստակեցում՝ ԵՄ անդամ պետությունների և հիմնական գործընկերների շրջանում առկա մտահոգությունները վերացնելու և դրա գործնական իրացմանը հետամուտ լինելու համար:

Այդ տեսանկյունից կարևոր էր 2022թ. մարտի 21-ին ԵՄ արտաքին հարաբերությունների խորհրդի հաստատած Ռազմավարական կողմնացույց (Strategic Compass) փաստաթուղթը⁵¹: Վերջինս նախորդ ռազմավարական փաստաթղթերի նկատմամբ ունի մի շարք առավելություններ: Մասնավորապես, փաստաթուղթը պարունակում է ԵՄ գործունեության ոլորտում գտնվող ռազմավար-

⁵¹ A Strategic Compass for Security and Defence, https://www.eeas.europa.eu/eeas/strategic-compass-security-and-defence-1_en.

րական միջավայրի, ինչպես նաև Միությանը սպառնացող վտանգների ու մարտահրավերների վերաբերյալ ընդհանուր գնահատական: Չնայած նրան, որ ԵՄ անդամ պետություններն ընդհանուր առմամբ համակարծիք են, որ իրենք բախվում են նույն ռիսկերին ու վտանգներին, սակայն արևելքում, հարավում կամ հարավ-արևելքում դրանց ընկալումն ակնհայտորեն նույնը չէ: Այդ տեսանկյունից ռազմավարական կողմնացույցը չափազանց կարևոր է, քանի որ այն ուղղված է հենց սպառնալիքների և ռիսկերի ընկալման ներդաշնակեցմանը⁵²: Փաստաթղթում ներկայացված են կոնկրետ առաջարկություններ՝ իրականացման հստակ ժամանակացույցով՝ ուղղված ճգնաժամային իրավիճակներում վճռական գործելու և իր անվտանգությունն ու քաղաքացիներին պաշտպանելու ԵՄ հնարավորությունների մեծացմանը:

ԵՄ ռազմավարական ինքնավարության գործնական դրսևորման հնարավորություններն ու մարտահրավերները. Ուկրաինայի դեպքը

Վերջին երկու տասնամյակներում ակնհայտ է հակամարտությունների կանխարգելման և արձագանքման գործում ԵՄ-ի ավելի ակտիվ ներգրավվածությունը, ինչը ռազմավարական ինքնավարության կարևոր դրսևորումներից է: Նախկինում այդ ներգրավվածությունը բավական սահմանափակ էր և առավելապես ուղղված էր աջակցելու այլ դերակատարների (ՄԱԿ, ՆԱՏՕ և այլն) միջնորդական ջանքերին, սակայն նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներին զուգահեռ փորձեր են արվում ավելի ինքնավար գործողությունների՝ այդ գործընթացներից դուրս չմնալու համար: 2020թ. ժողով Բորելը նշում էր, որ այնպիսի հակամարտություններում, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղը, Լիբիան և Սիրիան, Եվրոպան ականատես է լինում տարածա-

⁵² Why European Strategic Autonomy Matters, Euroean External Action Service (EEAS), 2020, https://www.eeas.europa.eu/eeas/why-european-strategic-autonomy-matters_en.

շրջանային հակամարտությունների «աստանիզացման» (նկատի ունենալով սիրիական հակամարտության կարգավորման հարցով ռուս-թուրք-իրանական համագործակցության Աստանայի ձևաչափը), որը հանգեցնում է տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործընթացից Եվրոպայի դուրսադմանը՝ ի օգուտ Ռուսաստանի և Թուրքիայի⁵³: Հենց այդ տրամաբանության շրջանակներում էր, որ Լեռնային Ղարաբաղում 2020թ. Ադրբեջանի սանձազերծած պատերազմից հետո կտրուկ մեծացավ ԵՄ ուշադրությունը Հարավային Կովկասում ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու ուղղությամբ: Դա են փաստում Եվրոպական խորհրդի նախագահի միջնորդությամբ Հայաստանի վարչապետի և Ադրբեջանի նախագահի միջև տեղի ունեցած հանդիպումները⁵⁴, Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության հաստատումը⁵⁵, Եվրախորհրդարանի անդրադարձերը Արցախյան խնդրին⁵⁶ և ռազմավարական ինքնա-

⁵³ Why European Strategic Autonomy Matters, Euroepan External Action Service (EEAS), 2020, https://www.eeas.europa.eu/eeas/why-european-strategic-autonomy-matters_en.

⁵⁴ Բրյուսելում տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի, Շառլ Միշելի և Իլիամ Ալիևի եռակողմ հանդիպումը 06.04.2022, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/04/06/Nikol-Pashinyan-trilateral-meeting/>; Շառլ Միշելը եռակողմ հանդիպում է ունեցել Հայաստանի վարչապետ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ, 24.05.22, <https://euneighbourseast.eu/hy/news/latest-news/sharrl-mishely-errakoghm-handipum-e-unecel-hayastani-varchapet-pashinyani-ew-adrbejani-naxagah-aliewi-het/>; Բրյուսելում տեղի է ունեցել Նիկոլ Փաշինյանի, Շառլ Միշելի և Իլիամ Ալիևի եռակողմ հանդիպումը, 31.08.2022, <https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/08/31/Nikol-Pashinyan-trilateral-meeting/>;

⁵⁵ Armenia-Azerbaijan: EU Sets Up Monitoring Capacity along the International Borders, Council of the EU press release, 17 October 2022, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/10/17/armenia-azerbaijan-eu-sets-up-monitoring-capacity-along-the-international-borders/>.

⁵⁶ European Parliament resolution of 20 January 2021 on the implementation of the Common Security and Defence Policy — annual report 2020 (2020/2207(INI)), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2021-0013_EN.pdf; Report on the implementation of the Common Foreign and Security Policy – annual report 2020, (2020/2206(INI)), <https://www.europarl.europa.eu/doceo/document/A-9->

վարության առաջամարտիկ Մակրոնի վճռականությունը ստանձնելու ավելի մեծ դերակատարություն հակամարտության կարգավորման գործում⁵⁷:

ԵՄ ռազմավարական ինքնավարության գործնական դրսևորումներն ավելի ակնհայտ դարձան ուկրաինական պատերազմի լույսի ներքո: ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչ ժողեպ Բորելը ԵՄ արձագանքը հակամարտությանը որակեց որպես «աշխարհաքաղաքական Եվրոպայի զարթոնք»⁵⁸, իսկ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը այն անվանեց «շրջադարձային կետ եվրոպական հասարակությունների, ժողովուրդների և եվրոպական նախագծի համար»⁵⁹:

Վերջին տասնամյակների ընթացքում Եվրոպայում բռնկված առավել լայնամասշտաբ պատերազմի պայմաններում ԵՄ-ն նախաձեռնեց իր պատմության մեջ աննախադեպ գործողություններ, որոնք այլ պայմաններում, անկասկած, կբխվեին տարբեր միջազգային դերակատարների սուր հակազդեցությանը: Դրանց թվում էին Եվրամիության որոշումը՝ առաջին անգամ օգտագործել Եվրոպական խաղաղության հիմնադրամը (ԵԽՀ)՝ Ուկրաինային զինելու համար, ընդլայնել պաշտպանության ոլորտի համագործակցությունը նոր սպառնալիքներին ընդառաջ, ընդլայնման քաղաքականության տևական դադարից հետո ուղարկել ԵՄ անդամակցության վերաբերյալ ազդանշաններ իր արևելյան

2020-0266_EN.pdf;

[https://oeil.secure.europarl.europa.eu/oeil/popups/ficheprocedure.do?lang=en&reference=2022/2582\(RSP\)](https://oeil.secure.europarl.europa.eu/oeil/popups/ficheprocedure.do?lang=en&reference=2022/2582(RSP))), European Parliament resolution of 10 March 2022 on the destruction of cultural heritage in Nagorno-Karabakh (2022/2582(RSP)), https://www.europarl.europa.eu/doceo/document/TA-9-2022-0080_EN.html.

⁵⁷ Macron Says France Ready to Help Build Lasting Solution to Nagorno-Karabakh Conflict, RFE/RL, November 13, 2020, <https://www.rferl.org/a/macron-france-ready-lasting-solution-karabakh-conflict/30946318.html>.

⁵⁸ **Youngs R.**, The Awakening of Geopolitical Europe? Carnegie Europe Papers, 2022, <https://carnegieeurope.eu/2022/07/28/awakening-of-geopolitical-europe-pub-87580>.

⁵⁹ Europe: A Turning Point?, Le Monde Diplomatique, April 2022, <https://mondediplo.com/2022/04/05sovereignty>.

գործընկերներին և առաջին անգամ գործարկել փախստականների վերաբերյալ 2001թ. Ժամանակավոր պաշտպանության մասին փաստաթուղթը (Temporary Protection Directive)⁶⁰:

Վերոնշյալ գործողություններից առավել շատ քննարկումների առիթ դարձավ այն, որ պատմության մեջ առաջին անգամ Եվրամիությունը զինում էր հակամարտող կողմի: Քանի որ ԵՄ պայմանագրերն արգելում են Միությանն օգտագործել իր կանոնավոր տարեկան բյուջեն՝ ռազմական կամ պաշտպանական նշանակություն ունեցող գործողությունները ֆինանսավորելու համար, այդ նպատակով օգտագործվեց 2021թ. հաստատված ԵԽՀ-ն⁶¹: Այն արտաբյուջետային միջկառավարական հիմնադրամ է՝ գործընկեր երկրներին ռազմական օգնություն տրամադրելու և ռազմական առաքելությունների տեղակայումը ֆինանսավորելու համար⁶²: 5 մլրդ եվրոյի հիմնադրամը փոխարինում է Աթենայի մեխանիզմին (Athena mechanism) և Աֆրիկյան խաղաղության հիմնադրամին, որոնք, ի տարբերություն նոր մեխանիզմի, ունեին սահմանափակ ծավալ և աշխարհագրական ընդգրկում⁶³: Իր ստեղծումից ի վեր ԵԽՀ-ն օգտագործվել է ոչ ԵՄ անդամ պետություններին այլ տեսակի օժանդակություն տրամադրելու համար (օրինակ, բժշկական սարքավորումներ, ենթակառուցվածքների վերականգնում, կիրեոպաշտպանություն և այլն), սակայն

⁶⁰ International Crisis Group, *The War in Ukraine Raises New Questions for EU Foreign Policy*, 2022, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/eastern-europe/ukraine/war-ukraine-raises-new-questions-eu-foreign-policy>.

⁶¹ European Peace Facility, https://fpi.ec.europa.eu/what-we-do/european-peace-facility_en.

⁶² European Council, *EU support to Ukraine: Council agrees on third tranche of support under the European Peace Facility for total €1.5 billion*, 13 April 2022, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/04/13/eu-support-to-ukraine-council-agrees-on-third-tranche-of-support-under-the-european-peace-facility-for-total-1-5-billion/>.

⁶³ **Maletta G, Héau L.**, *Funding Arms Transfers Through the European Peace Facility: Preventing Risks of Diversion and Misuse*, Stockholm International Peace Research Institute (SIPRI), June 2022, p. 3.

ռուս-ուկրաինական պատերազմը սկսելուց հետո ֆինանսավորման 90 տոկոսը հասկացվել է մահաբեր զենքեր ձեռք բերելու համար⁶⁴:

Ակնհայտ է, որ ԵՄՀ-ն ռազմավարական ինքնավարության նպատակի իրագործմանն ուղղված առավել կարևոր մեխանիզմներից է, որի հիմքերը դրվել էին մինչև Բորելի պաշտոնավարումը: Եվրոպական պաշտպանական միության օրակարգն առաջ էր քաշել դեռևս Եվրահանձնաժողովի նախկին նախագահ Ժան Կլոդ Յունկերը⁶⁵: «Խաղաղության հիմնադրամ» անվանումը փոքր-ինչ զավեշտալի է թվում այն առումով, որ մեխանիզմն առաջին անգամ կիրառվեց մահաբեր զենքերը ֆինանսավորելու և դրանք երրորդ երկիր ուղարկելու նպատակով: Այդ աննախադեպ իրադարձությունը ակնհայտ դարձրեց, որ «ռազմավարական ինքնավարությունն» առավելապես վերաբերում է ռազմական բաղադրիչի ընդլայնմանը և նույնիսկ ենթադրում է զգալի շեղում այն արժեքներից ու սկզբունքներից, որոնց վրա խարսխված է Եվրամիությունը: «Այս օրերին հանվեց ևս մեկ արգելք, որի համաձայն ԵՄ-ն չի կարող օգտագործել իր ռեսուրսները՝ ագրեսիայի ենթարկվող երկրին զենք տրամադրելու համար», նշում էր ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձրագույն ներկայացուցիչը⁶⁶:

Տարբեր կազմակերպություններ և առանձին պետություններ հնչեցրել են այդ հիմնադրամի ստեղծման վերաբերյալ իրենց մտահոգությունները: Մասնավորապես, 2020թ. նոյեմբերին հրապարակված համատեղ հայտարարության մեջ քաղաքացիական հասարակության 40 կազմակերպություններ ընդգծում էին, որ

⁶⁴ **Trenkov-Wermuth C., Zack J.**, Ukraine: The EU's Unprecedented Provision of Lethal Aid is a Good First Step, United States Institute of Peace, October 2022, <https://www.usip.org/publications/2022/10/ukraine-eus-unprecedented-provision-lethal-aid-good-first-step>.

⁶⁵ EU Needs Joint Military Headquarters, Juncker Says, France 24, 14.09.2016, <https://www.france24.com/en/20160914-european-union-juncker-military-hq-nato-brexite-usa>.

⁶⁶ EU Breaks 'Taboo' to Finance Purchase and Delivery of Weapons to Ukraine, EURACTIV, 2022, <https://www.euractiv.com/section/europe-s-east/news/eu-breaks-taboo-to-finance-purchase-and-delivery-of-weapons-to-ukraine/>.

առաջարկվող մեխանիզմը «ոչ միայն չի կարող վերացնել հակամարտությունների բուն պատճառները, այլև կարող է խթանել Միջազգային մարդասիրական իրավունքի և Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի խախտումները՝ միաժամանակ մեծացնելով խաղաղ բնակչությանը վնաս պատճառելու ռիսկերը»⁶⁷: Նշվում է, որ այդ մեխանիզմը չունի այնպիսի հատկանիշներ, որոնք կարող են իսկապես նպաստել հակամարտությունները կանխելու և խաղաղությունը պահպանելու ԵՄ նպատակի իրագործմանը: Ոչ վաղ անցյալում տեղի ունեցած իրադարձությունները (Աֆղանստանում, Սոմալիում և այլն) ցույց են տալիս, որ ռազմական միջոցառումները, որոնց ֆինանսավորումը ապագայում նախատեսվում է իրականացնել Եվրոպական խաղաղության հիմնադրամի շրջանակներում, կարող են հենց իրենք նպաստել հակամարտությունների սրմանը հատկապես դյուրաբեկ և հակամարտության արդյունքում պառակտված հասարակություններում⁶⁸:

Ոչ միայն հասարակական կազմակերպությունները, այլև Եվրոպական խորհրդարանի մի շարք անդամներ ևս քննադատության են արժանացրել ԵԽՀ-ն այն հիմքով, որ վերջինս շրջանցում է ԵՄ պայմանագրերը, ավելի է «ռազմականացնում» ԵՄ մոտեցումը ճգնաժամերին և հակամարտություններին, չունի վերահսկողության ու թափանցիկության բավարար լծակներ⁶⁹: Խնդիրն այն է, որ ԵԽՀ-ն արտաբյուջետային մեխանիզմ է, հետևապես ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ որոշումները գտնվում են ԵՄ խորհրդի վերահսկողության ներքո: Ուստի, Եվրախորհրդարանը չի իրականացնում խորհրդարանական վերահսկողություն և չունի համապատասխան որոշումների կայացման գործընթացների վրա

⁶⁷ Europan ‘Peace’ Facility: Causing Harm or Bringing Peace?, Joint Civil Society Statement, November 2020, <https://acrobat.adobe.com/link/track?uri=urn%3Aaaid%3Aascds%3AUS%3A1d9eea54-0774-43d8-9d21-7acaaf172a8b#pageNum=1>.

⁶⁸ Նույն տեղում:

⁶⁹ Maletta G, Héau L..., p. 2.

ֆորմալ ազդեցություն՝ չնայած դա անելու իր շահագրգռվածությանը⁷⁰:

Մյուս կարևոր գործոնն այն է, որ ԵԽՀ-ն ի չիք է դարձնում այն համոզմունքը, որ ԵՄ-ն հետամուտ է խաղաղ ճանապարհով կոնֆլիկտների կանխարգելմանը: Այն լուրջ սովեր է տարիներ շարունակ ձևավորված ԵՄ արտաքին քաղաքական իմիջի վրա և կարող է պատճառ դառնալ ԵՄ-ի՝ որպես հակամարտության կողմի ընկալման վրա: Դա ավելի սրվեց հոկտեմբեր ամսին, երբ ԵՄ-ն համաձայնության եկավ Ուկրաինայում Ռազմական աջակցության առաքելության (EUMAM) ձևավորման վերաբերյալ, որի նպատակն է աջակցել Ուկրաինայի զինված ուժերի ռազմական կարողությունների մեծացմանը⁷¹: Ինչպես նշում էր Բորելը, «EUMAM-ը սուսկ առաքելություն չէ, այն վառ ապացույց է, որ ԵՄ-ն Ուկրաինայի կողքին կլինի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է»⁷²: Ուստի, զարմանալի չէ, որ ռազմական աջակցության առաքելության հաստատումից հետո Ռուսաստանի կառավարությունը հայտարարեց, որ այդ քայլով Միությունը դառնում է հակամարտության կողմ⁷³: Հատկանշական է, որ ոչ բոլոր եվրոպական պետություններն են համաձայնել մասնակցել այդ առաքելության գործողություններին: Օրինակ Հունգարիան հրաժարվել է մասնակցությունից՝ մատնանշելով, որ ԵՄ-ի կողմից Ուկրաինային այդպիսի աջակցությունը եվրոպական երկրների համար ստեղծում

⁷⁰ European Parliament recommendation of 28 March 2019 to the Council and the Vice-President of the Commission / High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy concerning the Proposal of the High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy, with the support of the Commission, to the Council for a Council Decision establishing a European Peace Facility (2018/2237(INI)), 28 March 2019, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52019IP0330&rid=7>.

⁷¹ Council of the EU, Ukraine: EU Sets up a Military Assistance Mission to Further Support the Ukrainian Armed Forces, Press Release, 17 October, 2022, <https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2022/10/17/ukraine-eu-sets-up-a-military-assistance-mission-to-further-support-the-ukrainian-armed-forces/>.

⁷² Նույն տեղում:

⁷³ Diplomat Says EU Military Assistance Mission to Kiev Makes it Party to Ukrainian Conflict, TASS, 20 October, <https://tass.com/politics/1525301>.

է ռիսկեր՝ ուղղակիորեն ներքաշվելու կոնֆլիկտի մեջ⁷⁴: Մինչդեռ օրինակ Լեհաստանի համար, որի ներկայացուցիչը ղեկավարելու է Եվրամիության առաքելությունը, դա ոչ միայն «մեծ պատասխանատվություն է, այլև Լեհաստանի դիրքերի ճանաչում միջազգային թատերաբեմում»⁷⁵: Ակնհայտորեն, այն հավակնոտ նպատակը, որը հետապնդում է վերջերս ընդունած «Ռազմավարական կողմնացույցը», այն է՝ ռիսկերի ու վտանգների ընկալման ներդաշնակեցում անդամ պետությունների շրջանում, չափազանց դժվար է լինելու իրագործել: Դա ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության արդյունավետության, հետևաբար նաև՝ ռազմավարական ինքնավարության հասնելու ճանապարհին կարևոր մարտահարվեր է:

Չնայած ԵՄ-ի վճռական գործողություններին՝ պատերազմը, այդուհանդերձ, կրկին ընդգծեց, որ ինչպես նախկինում (Աֆղանստան, Բոսնիա, Իրաք, Կոսովո, Լիբիա), այնտեղ, որտեղ պայքար են ծավալում եվրոպական պետությունները, Միացյալ Նահանգների դերակատարությունն ունի վճռորոշ նշանակություն: Ռազմական միջոցների ձեռքբերման համար Միացյալ Նահանգների տրամադրած ֆինանսական օժանդակությունը Ուկրաինային (ավելի քան 10 միլիարդ դոլար) մի քանի անգամ գերազանցում է ԵՄ-ի տրամադրած աջակցությանը (2.5 միլիարդ դոլար): Նույնը վերաբերում է նաև ՆԱՏՕ-ի արևելյան թևի ամրապնդման համար Վաշինգտոնի ուղարկած զինծառայողների քանակին: Ավելին, վերջերս պետքարտուղար Բլինքենը հայտարարեց, որ Միացյալ Նահանգները պատրաստվում է Ուկրաինային տրամադրել լրացուցիչ 400 միլիոն դոլարի ռազմական օգնություն⁷⁶: Ընդհանուր

⁷⁴ ЕС официально запустил тренировочную миссию для военных ВСУ на своей территории, газета.ру, 14 ноября 2022, <https://www.gazeta.ru/army/news/2022/11/14/19033159.shtml?updated>.

⁷⁵ Polish General Chosen to Lead EU Training Mission for Ukrainian Troops, Reuters, 28 October, 2022, <https://www.reuters.com/world/europe/polish-general-chosen-lead-eu-training-mission-ukrainian-troops-2022-10-28/>.

⁷⁶ U.S. Authorizes \$400 mln in New Military Aid for Ukraine, Reuters, November 23, 2022, <https://www.reuters.com/world/europe/us-authorizes-400-mln-new-military-aid-ukraine-2022-11-23/>.

առմամբ, Մառը պատերազմի ավարտից ի վեր Եվրոպայի «մասնաբաժինը» ռազմական գործողություններում մնում է զարմանալիորեն կայուն՝ հազվադեպ գերազանցելով 20 տոկոսը⁷⁷: Միաժամանակ, թեև վերջին ամիսներին Ուկրաինայում ընթացող պատերազմը հայտնվել է Վաշինգտոնի ուշադրության կենտրոնում, Չինաստանը և Հնդկական-խաղաղասովկիանոսյան տարածաշրջանը շարունակում են մնալ Սպտակ տան ռազմավարական առանցքում: Դա է փաստում 2022 թվականի հոկտեմբերի 12-ին Բայդենի վարչակազմի հաստատած Ազգային անվտանգության ռազմավարությունը, որում Չինաստանը մատնանշվում է որպես «համակարգային», «գլոբալ» մարտահրավեր, իսկ Ռուսաստանը՝ որպես «անմիջական», սակայն լոկալ սպառնալիք⁷⁸:

Ուկրաինայում եվրոպական գործողությունները, անկասկած, կազդեն նաև ինտեգրման գործընթացների վրա: Ուկրաինայում սկսված գործողություններից չորս ամիս անց Ուկրաինային և Մոլդովային շնորհվեց ԵՄ-ին անդամակցության թեկնածուի կարգավիճակ: Ակնհայտ է, որ դա արվեց մի շարք վերապահումներով և հղի է լուրջ հետևանքներով: Նախ, այդ երկրների տնտեսությունները բավականաչափ ճկուն չեն միասնական շուկայում մրցակցելու համար: Երկրորդ, կան իրավունքի գերակայության, կազմակերպված հանցավորության ու կոռուպցիայի վերահսկման հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Բավարար է նշել, որ 2021թ. կոռուպցիայի մակարդակի տվյալներով Ուկրաինան զբաղեցնում է երկրորդ ամենացածր հորիզոնականը Եվրոպայում⁷⁹: Երրորդ, ԵՄ իրավական համակարգին մոտարկման ճանապարհին ևս անհրաժեշտ են զգալի բարեփոխումներ, որոնք ակնհայտ է, որ

⁷⁷ **Szewczyk B.**, Scholz and Macron Have a Perilous Ambition for Europe, Foreign Policy, September 8, 2022, <https://foreignpolicy.com/2022/09/08/european-strategic-autonomy-eu-security-macron-scholz-ukraine-defense-nato/>.

⁷⁸ The White House, National Security Strategy, October 12, 2022, <https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf>.

⁷⁹ Corruption Perceptions Index, <https://www.transparency.org/en/cpi/2021>.

տնական ժամանակ հազիվ թե իրականացվեն՝ հաշվի առնելով հատկապես պատերազմական իրավիճակը:

Պատահական չէ, որ այսօր մի շարք պետություններ ԵՄ անդամ դառնալու ցանկություն են հայտնում բացառապես անվտանգային ու պաշտպանական նկատառումներով: Թեև նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներով և դրա արդյունքում աճող սպառնալիքներով պայմանավորված դա այնքան էլ զարմանալի չէ, սակայն արժեքների ու սկզբունքների վրա խարսխված Եվրամիության դեպքում այդ աճող միտումը ցույց է տալիս կազմակերպության վերաիմաստավորման միտումները: Դա, իր հերթին, կարող է առաջ բերել մի կողմից այդ արժեքներն իսկապես կրող անդամ պետությունների, մյուս կողմից սպասման փուլում գտնվող պետությունների դժգոհությունը, որոնք անդամակցության համար պարտադիր համարվող Կոպենհագենյան չափանիշների ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել, սակայն դեռևս ԵՄ անդամ չեն:

Ռազմավարական ինքնավարության ճանապարհին առանցքային նշանակություն ունի նաև ԵՄ կախվածությունների նվազեցման խնդիրը, որը ևս առանձնահատուկ ընդգծվեց ուկրաինական պատերազմի համատեքստում: Տնտեսագետները պատերազմը բնորոշեցին որպես երրորդ (2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից և Քովիդ 19 համավարակից հետո) «ասիմետրիկ շոկ»⁸⁰, որին բախվեց Միությունը վերջին երկու տասնամյակներում⁸¹: Դա հատկապես վերաբերում է էներգետիկ ոլորտին, որը 2016թ. Գլոբալ ռազմավարության մեջ ընդգրկվել է այն ոլորտների շարքում, որոնց ուղղությամբ պետք է հասնել ինքնավարության: Եվրոպական էներգետիկ ոլորտի ռազմավարական և անվտանգային զգալի նշանակությունը չի համընկնում

⁸⁰ Տնտեսական պայմանների անսպասելի փոփոխություն, որն ավելի շատ է ազդում ԵՄ անդամ հանդիսացող մի շարք պետությունների վրա, քան ոչ ԵՄ անդամ պետությունների վրա:

⁸¹ The War in Ukraine and Its Implications for the EU, EU External Action, March 14, 2022, https://www.eeas.europa.eu/eeas/war-ukraine-and-its-implications-eu_en.

այն փաստի հետ, որ «ԵՄ-ն և նրա բոլոր անդամ երկրները պարզապես էներգիայի ներկրողներ են»⁸²: Ավելին, այդ ինքնավարության բացը ավելի է սրում նաև այն հանգամանքը, որ էներգակիրներից կախվածությունը կենտրոնացած է ընդամենը մի քանի մատակարարների վրա: Արդյունքում ռազմավարական այդպիսի կարևորություն ունեցող ոլորտում ասիմետրիկ կախվածությունը ռազմավարական ինքնավարության համար ստեղծում է ոչ բարենպաստ պայմաններ՝ թուլացնելով քաղաքական որոշումներ ընդունելու և դրանց հիման վրա գործելու եվրոպական կարողությունները:

Եզրակացություն

Եվրոպական ռազմավարական ինքնավարության հասկացության, դրա աշխարհաքաղաքական չափման և Ուկրաինայում գործնական դրսևորումների վերաբերյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ

1. Ռազմավարական ինքնավարության գործարկումը պահանջում է առնվազն այդ հասկացության հստակ սահմանում: Չնայած այդպիսի փորձեր եղել են, սակայն դրանք այնքան սպառնիչ չեն, որպեսզի անդամ պետությունների շրջանում ձևավորվի «ռազմավարական ինքնավարության» միասնական ընկալում: Արդյունքում ԵՄ-ի ներսում ձևավորվել է երկու հակադիր բևեռ. նրանք, ովքեր ռազմավարական ինքնավարության հասնելու եվրոպական նկրտումները տեսնում են ԵՄ-ՆԱՏՕ մրցակցության համատեքստում՝ այն ընկալելով որպես սպառնալիք անդրատլանտյան համագործակցության համար և նրանք, ովքեր այդ երկու կառույցները համարում են փոխլրացնող: Նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացներով պայմանավորված առաջին խմբի երկրների մտահոգությունը սահմանափակված չէ միայն անվտանգային հարցերով և վերաբերում է նաև հետբերքսիթյան ԵՄ-ի ներսում ուժերի հավասարա-

⁸² Lippert B. et al., *European strategic autonomy. Actors, issues, conflicts of interests*, Stiftung Wissenschaft und Politik, SWP Research Paper 4, 2019.

կշռությանն ու պակաս ազդեցիկ անդամ պետությունների շահերի ներկայացմանը: Այդ պառակտումը զգալիորեն նվազեցնում է ներնուծված հասկացության գործնական իրացման հեռանկարները:

2. Եվրոպայի քաղաքական շրջանակներում ռազմավարական ինքնավարության մասին քննարկումներում առանցքային տեղ է զբաղեցնում «գործելու կարողություն» ձևակերպումը: Ընդ որում, դա դրսևորվում է երկու ուղղությամբ. Ռազմաքաղաքական ոլորտում ընդգծվում է ռազմական ներուժի մեծացման անհրաժեշտությունը, իսկ տնտեսական, առևտրային և այլ ոլորտներում՝ արտաքին կախվածությունների նվազեցման խնդիրը: Թեև երկուսն էլ տրամաբանական են, սակայն քննարկումներից դուրս է մնում այն հարցը, թե արդյոք «գործելու կարողության» այդ երկու ուղղությունները կարող են օգնել լուծել ԵՄ արտաքին գործողություններում վերջին տարիներին նկատվող ճգնաժամը կապված ազատական և ժողովրդավարական սկզբունքներին աջակցության գործընթացի հետ:
3. Ուկրաինայի դեպքում «ռազմավարական ինքնավարության» ռազմական բաղադրիչի ընդլայնումն իրականացվում է Եվրամիության հիմքում ընկած նորմերից ու արժեքներից զգալի շեղման ճանապարհով, ինչը կարող է առաջացնել լուրջ խնդիրներ ինչպես ԵՄ-ի ներսում, այնպես էլ ԵՄ-ի՝ որպես «նորմատիվային ուժի» արտաքին իմիջի առընչությամբ: Այդ շեղումն անկասկած կազդի 1. ինտեգրման գործընթացների վրա, քանզի ինտեգրման հիմքը հենց այդ արժեքներն ու նորմերն են, 2. հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա (հակամարտությունների սրման պոտենցիալ ունեցող Եվրոպական խաղաղության հիմնադրամի ոչ համաչափ ու լիարժեք արդարացված գործարկման արդյունքում), 3. ԵՄ բազմակողմ համագործակցության հնարավորությունների վրա:
4. Չնայած ԵՄ պաշտոնյաների այն կոչերին, որ ռազմավարական ինքնավարությունը որևէ կերպ չի

հակադրվում արևմտյան կառույցներին, այդ եզրույթն ինքնին ենթադրում է Եվրամիության ավելի վճռական ներգրավվածություն այնպիսի հակասական հարցերում և որոշումներում, որոնցից կազմակերպությունը տասնամյակներ շարունակ նախընտրում էր խուսափել: Աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ այդ ներգրավվածությունն անխուսափելիորեն կարող է հակադրվել տարբեր գերտերությունների՝ այդ թվում Միացյալ Նահանգների, մոտեցումներին ու շահերին: Այն սերտորեն կապված է նաև այնպիսի ազդեցիկ դերակատարների հավակնությունների, քաղաքականությունների և գործողությունների հետ, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը, Չինաստանը և Թուրքիան:

5. Ռեզոլուցիայի և ինքնավարության ավելի առարկայական դարձնելու տեսանկյունից չափազանց կարևոր է ապահովել անդամ պետությունների շրջանում Միությանը սպառնացող վտանգների ընկալման ներդաշնակեցում: Թեև այդ նպատակի իրագործմանն է ուղղված վերջերս հաստատած «Ռեզոլուցիայի կողմնացույց» փաստաթուղթը, սակայն Ուկրաինայի դեպքը փաստում է, որ դա չափազանց հավակնոտ նպատակ է, որի իրագործման համար պահանջվելու էրկար ժամանակ, այլընտրանքային լծակներ և քաղաքական կամք:

“Strategic Autonomy” as a Way of Expanding the EU’s Influence in the Process of Establishing a New World Order: Challenges and Perspectives

MARINE KIRAKOSYAN

Brusov State University

The article examines the concept of “strategic autonomy”, which has recently been central to the EU's official discourse, as well as its role in expanding the EU's influence. Special attention is drawn to the geopolitical dimension of “strategic autonomy”, which due to the processes of the establishment of new world order, significantly affects the prospects of practical implementation of this idea. Drawing on the case of Ukraine, an attempt is made to highlight the possibilities and challenges of achieving strategic autonomy, as well as to outline the scope of its probable dangers for the EU itself. The article concludes that the expansion of the military component of “strategic autonomy”, through a significant deviation from the norms and values underlying the organization, may cause serious problems both within the EU and for the EU’s external image as a "normative power".